Մեթոդաբանություն

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի արժեքների, նպատակների և հիմնական դրույթների ամրապնդմանը միտված հաղորդակցության/քարոզարշավների վարման

Սույն աշխատությունում արտահայտված կարծիքները հեղինակներինն են և կարող են չհամընկնել Եվրոպայի խորհրդի կամ «ՄԱԿ-կանայք» կազմակերպության տեսակետների հետ:

Սույն աշխատությունը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի ֆինանսական աջակցությամբ և «ՄԱԿ-կանայք» կազմակերպության հետ համագործակցությամբ:

Բովանդակություն

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ 3
ԼՈՒԾԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 4
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂԵՐՁՆԵՐ 6
ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ 100
Թիրախային խմբեր 10
Հնարավոր դաշնակիցներ 111
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ 133
Որոշում կայացնողների թիրախավորում 133
Լայն հասարակության թիրախավորում 144
ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ 155
Առաջարկվող գործիքները 155
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԸ 200
Որոշումներ կայացնողներ 200
Լայն հասարակություն 211
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 222

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն մեթոդաբանությունը մշակվել է 2020 թվականին «Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա» (WAVE) ցանցի կողմից Եվրոպայի խորհրդի և «ՄԱԿ-կանայք» կազմակերպության աջակցությամբ՝ նպատակ ունենալով մշակել մարդու իրավունքների վրա հիմնված գենդերազգայուն զոհակենտրոն մոտեցում, մեթոդաբանություն և գործիքակազմ՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի, որը նաև հայտնի է որպես Ստամբուլի կոնվենցիա, արժեքները, նպատակները և դրույթները ամրապնդելու համար։

Մեթոդաբանությունը ներկայացնում է տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կողմից իրականացման ենթակա հաղորդակցության և քարոզարշավների ռազմավարությունը, հատկապես այն երկրներում, որոնք բախվել են կանանց իրավունքների և մասնավորապես Ստամբուլի կոնվենցիայի դեմ բացասական քաղաքական արձագանքի։

Հաղորդակցության և քարոզարշավների հիմնական նպատակն է տարածել Ստամբուլի կոնվենցիայի արժեքները, նպատակներն ու օգուտները՝ ստեղծելով դրական նառատիվներ և փարատելով կոնվենցիայի վերաբերյալ առասպելներն ու ապատեղեկատվությունը։ Ակնկալվում է, որ պարզ և հասկանալի լեզվով Ստամբուլի կոնվենցիայի հանրայնացումը կբարձրացնի թիրախային խմբերի իրազեկությունը կանանց իրավունքների և, վերջին հաշվով, կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և հաղթահարման վերաբերյալ։

Այս առումով, ներկա մեթոդաբանությունը առանցքային ուղերձներ և գործիքներ է տրամադրում տեղական ՔՀԿ-ներին՝ արդյունավետորեն իրականացնելու հաղորդակցություն և քարոզարշավներ և աջակցելու նրանց օգտագործել այդ գործիքները։ Առաջարկվող հաղորդակցության և քարոզարշավների գործիքները կարող են յուրացվել արշավները վարող տեղական ՔՀԿ-ների կողմից՝ կախված իրենց երկրում Ստամբուլի կոնվենցիայի կարգավիճակից։

Մեթոդաբանությունը փորձնական կիրառվել է 2021 թվականին, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի գիտելիքներ և փորձ ունեցող ընտրված ՔՀԿ-ների կողմից, երեք երկրներում՝ Չեխիայում, Լատվիայում և Լեհաստանում։ Յուրաքանչյուր երկրի պարագայում փորձնական հաղորդակցությունները և քարոզարշավները նպատակ ունեն ճանապարհ հարթել դեպի Ստամբուլի կոնվենցիայի վավերացումը, կամ դրա ավելի լավ իրականացումը։ Քաղված դասերը և առաջարկությունները հաշվի են առնվել ԵԽ անդամ բոլոր երկրներում՝ ՔՀԿ-ների կողմից օգտագործվող մեթոդաբանականական փաթեթը վերջնական տեսքի բերելու ժամանակ։

ԼՈՒԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ առասպելների և թյուր պատկերացումների տարածման և նույնիսկ Կոնվենցիայից դուրս գալու սպառնալիքների պարագայում անհրաժեշտ է բարձրացնել որոշումներ կայացնողների և լայն հանրության իրազեկվածությունը Կոնվենցիայի բովանդակության վերաբերյալ և դրա ընկալումը: Մասնավորապես պետք է հստակ ներկայացնել Ստամբուլի կոնվենցիայում ընդգրկված բռնության բոլոր ձևերի տարբեր դրսևորումները, դրանց հետևանքները, բռնությունը կանխելու և դրա դեմ պայքարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև Կոնվենցիայի նպատակները և օգուտները:

Ի սկզբանե հաղորդակցության և քարոզարշավների փորձնական իրականացման համար ընտրվեց հինգ երկիր՝ Խորվաթիան, Չեխիան, Լատվիան, Լեհաստանը և Թուրքիան[1], որտեղ Ստամբուլի կոնվենցիայի դեմ զգալի քաղաքական հակազդեցություն է նկատվել: Միևնույն ժամանակ, այդ հինգ թիրախային երկրներում քաղաքական լանդշաֆտը նաև հնարավորություններ է ընձեռում, որոնց միջոցով կարելի է ճանապարհ հարթել Կոնվենցիայի վավերացման կամ պատշաճ իրականացման համար: Այդ նպատակով մշակվել է առանձին մեթոդաբանություն և գործիքակազմի՝ աջակցելու վերոնշյալ երկրներում և, ի վերջո, ամբողջ Եվրոպայում այդպիսի նախաձեռնություններին:

Համաձայն WAVE հայեցակարգի[2], որը մշակվել է ներկա մեթոդաբանությանն աջակցելու համար, հինգ թիրախային երկրներում բացահայտվել են հետևյալ չորս հիմնական խնդիրները և կեղծ նառատիվները, որոնք քարոզարշավները մտադիր են փարատել.

- **«Գենդեր» հասկացությունը** բոլոր թիրախային երկրներում խնդրահարույց է համարվում: Քանի որ «գենդեր» բառը լեզուների մեծ մասում բառացի թարգմանություն չունի, «գենդերն» օգտագործվում է աջ քաղաքական գործիչների, պահպանողական և կրոնական խմբերի կողմից որպես անձի սեռի համարժեքը:
- Բազմաթիվ հանրային քննարկումներում, որոնց զուգորդում են նաև գենդերային չեզոք բնույթի մասին քննարկումները, առաջ է քաշվում

[1] 2021 թվականի հուլիսի 1-ին Թուրքիան դուրս եկավ Ստամբուլի կոնվենցիայից և այլևս այս կոնվենցիայի մասնակից պետություն չէ:

[2] Հայեցակարգը ստեղծվել է WAVE-ի կողմից Եվրոպայի խորհրդի գենդերային իրավահավասարության բաժնի համար՝ Ստամբուլի կոնվենցիայի արժեքները, նպատակներն ու դրույթները ամրապնդելու և դրա մասին առասպելներն ու ապատեղեկատվությունը փարատելու նպատակով՝ իրազեկության բարձրացման տեսլականի ամփոփ ներկայացման համար: Փաստաթղթում ամփոփված է տեղեկատվություն WAVE-ի անդամ մի շարք պետություններում Ստամբուլի կոնվենցիայի վավերացման և իրականացման հետ կապված ներկա իրավիճակի վերաբերյալ, որին հաջորդում է ներկա մարտահրավերների, ինչպես նաև Կոնվենցիայի մասին իրազեկությունը բարձրացնելու հնարավորությունների լուսաբանումը:

«**ինքնաբավ**» օրենսդրության փաստարկը, այն հիմնավորմամբ, որ պատժելով բռնությանն առնչվող հանցագործությունները ներպետականն օրենսդրությունը բավարար պաշտպանություն է ապահովում բռնության ենթարկված կանանց և տղամարդկանց համար:

- Ստամբուլի կոնվենցիան չվավերացրած շատ երկրներ, որպես փաստարկ, մտահոգություն են արտահայտում, որ կոնվենցիան իբր պարտադրում է **ԼԳԲՏՔ+ արժեքները**, ներառյալ **միասեռ զույգերի** օրինական ճանաչումը:
- Մտավախություն, որ Ստամբուլի կոնվենցիայի վավերացման արդյունքում **միգրանտների մեծ զանգվածը** կկարողանա մուտք գործել իրենց երկիր և **ապաստան հայցել**:

Ըստ WAVE-ի անդամներից ստացված տեղեկատվության՝ թիրախային երկրներում այս կեղծ նառատիվները տարածող և նման բացասական կարծիքներ հնչեցնող հիմնական դերակատարները ազգային խորհրդարաններում կամ կառավարություններում հայտնի աջակողմյան քաղաքական խմբերն են, ինչպես նաև տարբեր դավանանքների մի շարք պահպանողական կրոնական խմբերը: Այդ երկու խմբերը մատնանշվել են բոլոր հարցված երկրներում, ինչպես նաև բացահայտվել են անցյալ գործողությունների արդյունքում, մասնավորապես կարելի է նշել Եվրոպայի խորհրդի ինը անդամ երկրների 333 ՀԿ-ների (հիմնականում կրոնական խմբերը ներկայացնող) ստորագրությամբ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղարկված նամակը[3], որտեղ պահանջվում է վերանայել Ստամբուլի կոնվենցիան՝ «գենդերային հավասարություն» բառերը փոխարինելով «կանանց և տղամարդկանց հավասարություն» բառերով:

[3] https://www.arci.it/app/uploads/2018/05/letter_to_secretary_general_of_coe_thorbjorn_jagland.pdf

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂԵՐՁՆԵՐ

Մշակվել է ուղերձների մի շարք, որոնց նպատակն է փարատել Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ առասպելներն ու թյուրըմբռնումները՝ ընդգծելով կոնվենցիայի առավելությունները: Ուղերձները ներկայացված են պարզ բառերով, կազմելով հաղորդակցության և քարոզարշավների, ինչպես նաև դրանց հարակից գործիքների, հիմնական շրջանակը: Դրանք միտված են լուսաբանելու Ստամբուլի կոնվենցիայի առավելությունները:

ՔՀԿ-ներին առաջարկվում է հարմարեցնել այս ուղերձներն իրենց ազգային համատեքստին և օգտագործել դրանք հետևյալ եղանակով՝

- Որպես կոնկրետ տեղական քարոզարշավի կիզակետ.
- Հանրային քննարկումներում.
- Լրատվական հոդվածներում և հրապարակումներում.
- Սոցիալական մեդիայի հատուկ ծրագրերում, այդ թվում՝ պրոֆիլի/շապիկի նկարների միջոցով.
- Պատմասության միջոցով.
- Շնորհանդեսների, ճեպազրույցների կամ ցանկացած տեսակի հանդիպումների, վերապատրաստման դասընթացների, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ազգային համաժողովների ժամանակ (օրինակ՝ PowerPoint-ով ցուցադրման սկզբում կամ որպես լսարանի ուշադրությունը գրավելու միջոց).
- Փողքասթի դրվագներում կամ որպես փողքասթերի ներածական հատված.
- Քաղաքային տրանսպորտի կանգառներում գովազդային վահանակների կամ պաստառների վրա՝ անցորդների ուշադրությունը գրավելու համար:

Այդ առաջնային ուղերձները մշակվել են Ստամբուլի կոնվենցիայի հետ կապված առանցքային հարցերի շուրջ թիրախ խմբերին (որոշումներ կայացնողներին և հանրությանը) ներգրավելու և հանրային աջակցություն ապահովելու համար: Կոնկրետ թիրախային խմբին փոխանցվելիք ուղերձների ընտրությունը ՔՀԿ-ների հայեցողությամբ է:

Խորհուրդ է տրվում, որ ՔՀԿ-ները մինչ վերջնական ընտրություն կատարելը քննարկեն առանցքային ուղերձների հաղորդակցության գծով փորձագետի հետ՝ համոզվելու համար, որ դրանք հնարավորինս թիրախավորված են:

Թյուր պատկերացում. *Ստամբուլի կոնվենցիայում «գենդեր» տերմինն ընդգրկելով փորձ է արվում վերաասահմանել սեռերի դերերը:*
Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան հոդվածներ. *Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման վերաբերյալ 12-15-րդ հոդվածները նպատակ ունեն փոխել այն, թե ինչպես են մարդիկ տեսնում և ընկալում կանանց և տղամարդկանց հասարակության մեջ և ինչպես է խրախուսվում ոչ բռնի հաղորդակցությունը:*

Ուղերձներ.

- Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը բռնության ամենատարածված ձևերից են, ընդ որում աշխարհում յուրաքանչյուր 3 կնոջից 1-ը իր կյանքի ընթացքում ենթարկվել է բռնության[4]:
- Ստամբուլի կոնվենցիան կենտրոնանում է կանանց վրա, քանի որ այն ընդգրկում է բռնության այն տեսակները, որոնցից միայն կանայք են տուժում կամ որոնց նրանք ավելի հաճախ են ենթարկվում, քան տղամարդիկ, օրինակ՝ բռնաբարությունը կամ ընտանեկան բռնությունը: Սակայն, Ստամբուլի կոնվենցիան երկրներին կոչ է անում կիրառել այդ դրույթները ընտանեկան բռնության ենթարկված բոլոր անձանց, այդ թվում՝ տղամարդկանց և տղաների նկատմամբ:
- Ստամբուլի կոնվենցիան ընդգծում է դպրոցներում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին խոսելու կարևորությունը, որպեսզի տղաներն ու աղջիկներն իմանան, որ ունեն հավասար իրավունքներ և հնարավորություններ, և որ բռնությունը երբեք լուծում չէ:
- Ստամբուլի կոնվենցիան նշում է կանանց նկատմամբ բռնության կամ «գենդերային հիմքով բռնության» «գենդերային» բնույթը, քանի որ այն վերաբերում է բռնության այն ձևերին, որոնք հիմնականում կամ բացառապես ազդում են կանանց վրա:
- Քանի որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը ավելի է տարածված այն հասարակություններում, որտեղ կանայք ավելի քիչ իրավունքներ ունեն կամ որտեղ այդ իրավունքները ոտնահարվում են, Ստամբուլի կոնվենցիան ընդգծում է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի կարևորությունը՝ գենդերային հավասարության ապահովման համար:

[4] ՄԱԿ-կանայք, Փաստեր և թվեր. կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը (2020թ.):

Թյուր պատկերացում. *Ներպետական օրենսդրությունը ինքնաբավ է, ուստի Ստամբուլի կոնվենցիան անհրաժեշտ չէ:*
Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան հոդվածներ. *Մասնավորապես՝ 7-րդ հոդված. կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի համապարփակ քաղաքականություն, 18-ից 26-րդ հոդվածներ. տուժողներին պետք է աջակցություն ցուցաբերվի և՛ ընդհանուր և՛ մասնագիտացված ծառայությունների միջոցով. 33-ից 40-րդ հոդվածներ. ԿՆԲ-ի և ՀԲ-ի բոլոր ձևերի քրեականացում:*

Ուղերձներ.

- Երկրների մեծ մասը չի անդրադառնում կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին, ինչպիսիք են բռնաբարությունը, ամուսնական բռնաբարությունը, սեռական հետամտումը, հետապնդումը, հարկադիր հղիության արհեստական ընդհատումը, հարկադիր ամլացումը կամ հարկադիր ամուսնությունը: Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է, որ պետությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեն բռնության բոլոր ձևերը կանխելու, բոլոր տուժողներին պաշտպանելու և հանցագործներին պատժելու համար:
- Շատ երկրներում COVID-19 համաճարակի բռնկումը բացահայտեց կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության տուժողների պաշտպանության հարցում ներպետական օրենսդրության բացերը և նրանց տրվող անբավարար աջակցությունը: Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է, որ տուժողները մշտապես և անհապաղ պաշտպանություն ստանան:
- Այն երկրներում, որտեղ Ստամբուլի կոնվենցիան վավերացվել է, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը այլևս կախված չէ կառավարության քաղաքական կամքից, այլ պարտավորություն է միջազգային իրավունքի համաձայն:

Թյուր պատկերացում. *Ստամբուլի կոնվենցիան ամրապնդում է LGBTQ+ արժեքներն ու ինքնությունը և վնասում է ավանդական ընտանիքին:*
Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան հոդվածներ. *1-ից 4-րդ հոդվածներ. Ստամբուլի կոնվենցիայի նպատակները և որ ոչ մի տուժող չի կարող ենթարկվել խտրականության:*

Ուղերձներ.

- Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ենթարկված բոլոր անձանց պաշտպանությունը, անկախ նրանից, թե ում են նրանք սիրում:

- Ստամբուլի կոնվենցիան և մարդու իրավունքների այլ կոնվենցիաները (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան[5]) հռչակում են, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության կամ բռնության՝ սեռական կողմնորոշման պատճառով: Խտրականության բացառման սկզբունքն առկա է նաև շատ երկրների ներպետական օրենսրությունում:
- Ստամբուլի կոնվենցիան չի սահմանում, թե ինչ է ամուսնությունը կամ ընտանիքը կամ ինչպիսին այն պետք է լինի: Բռնության տեղի ունենալու դեպքում այն պաշտպանում է ցանկացած տեսակի ընտանիքում ապրող տուժողին:
- Բռնությունն է, որ ոչնչացնում է ընտանիքները, այլ ոչ թե Ստամբուլի կոնվենցիան:
- Շատ երկրներ, որոնք չեն ճանաչում միասեռ ամուսնությունները, արդեն իսկ վավերացրել են Ստամբուլի կոնվենցիան, քանի որ Ստամբուլի կոնվենցիան ուղղված է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը, այլ ոչ թե նրանց սեռական կողմնորոշմանը:

Թյուր պատկերացում. *Ստամբուլի կոնվենցիան կառաջացնի ապաստան հայցող միգրանտների մեծ ներհոսք:*
Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան հոդվածներ. *59-60 հոդվածներ. գենդերային հիմքով ապաստանի հայցեր:*

Ուղերձներ.

- Ստամբուլի կոնվենցիան երաշխավորում է, որ բոլոր կանայք, ներառյալ փախստականները և ապաստան հայցողները, պաշտպանված են բռնության ցանկացած ձևից: Բռնությունից ազատ կյանքով ապրելու իրավունքը պատկանում է բոլոր կանանց՝ անկախ նրանց միգրանտի կամ փախստականի կարգավիճակից:
- Ստամբուլի կոնվենցիան սահմանում է, որ բռնության ենթարկված կնոջ իրավունքը՝ մնալու այն երկրում, որտեղ ներկայումս ապրում է, չպետք է կախված լինի ամուսնացած լինելուց կամ բռնարար զուգընկերոջ հետ հարաբերություններից:
- Ստամբուլի կոնվենցիան փախստական կանանց վերաբերյալ նոր կանոններ չի սահմանում: Ժնևի փախստականների կոնվենցիան[6] արդեն իսկ կանանց նկատմամբ բռնությունը հավասարեցնում է «հալածանքի», որը հիմք է փախստականի կարգավիճակ տրամադրելու համար:

[5] https://www.echr.coe.int/documents/convention_eng.pdf
[6] https://www.unhcr.org/3b66c2aa10

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ

Հաղորդակցության և քարոզարշավների հիմնական թիրախային խմբերը **որոշում կայացնողներն** են, այդ թվում՝ կարևոր քաղաքական գործիչները և **լայն հասարակությունը**, ներառյալ բռնության ենթարկված կամ նման վտանգի ենթարկվող կանայք:

Քարոզարշավ իրականացնող յուրաքանչյուր ՔՀԿ պատասխանատու է բացահայտել համապատասխան որոշում կայացնողներին, որոնց պետք է դիմել, ինչպես նաև օգտագործման համար ռեսուրսները և դաշնակիցներին, որոնց աջակցությունը պետք է հայցել:

Թիրախային խմբեր

Որոշումներ կայացնողները բոլոր այն գործիչներն են, ովքեր իրավասու են ազդելու Ստամբուլի կոնվենցիայի վավերացման/ավելի լավ իրականացման վերաբերյալ որոշումների վրա և որոնց կարելի է դիմել այդ հարցում աջակցելու համար: Հիմնական որոշումներ կայացնողների թիրախավորումը նպատակ ունի ստեղծել փոփոխությունների առաջնորդների, որոնք կարող են ազդեցություն ունենալ բնակչության զգալի մասի վրա:

Այդ նպատակով առանձնացվում են որոշում կայացնողների երկու խնբեր.

- Նրանք, ովքեր ի սկզբանե Ստամբուլի կոնվենցիայի կողմնակից են:
- Նրանք, ովքեր հստակ և/կամ հրապարակայնորեն դեմ չեն Ստամբուլի կոնվենցիային կամ չեն կողմնորոշվում Կկոնվենցիայի նկատմամբ դիրքորոշման հարցում: Այս խումբն, առերևույթ, բավարար տեղեկացված չէ նման մարդու իրավունքների օրինական գործիք ունենալու ազդեցության և կարևորության, ինչպես նաև կանանց մարդու իրավունքների ամրապնդման և բռնության տուժողներին համապատասխան աջակցություն առաջարկելու կարևորության մասին: Նման որոշում կայացնողների, որոնց թվում են նաև խոշոր համայնքների ղեկավարները, կարելի է հանդիպել ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակում:

Լայն հանրությունը երկրի ընդհանուր բնակչությունն է, որը տեղեկացված չէ կամ անբավարար է տեղեկացված Ստամբուլի կոնվենցիայի շրջանակի և կիրառման մասին: Կանանց և ամբողջ հասարակական կյանքի վրա Ստամբուլի կոնվենցիայի օգուտների մասին հստակ և պարբերական տեղեկատվության միջոցով հնարավոր է ապահովել վերջինիս նկատմամբ լայն հասարակության աջակցությունը: Որպես օրինակ կարելի է նշել Թուրքիան և Լեհաստանը, որտեղ, այն բանից հետո, երբ

կառավարությունը սպառնաց դուրս գալ Կոնվենցիայից, այն մեծ հանրային աջակցության արժանացավ:[7]

ՔՀԿ-ները կարող են նաև իրենց նախաձեռնություններում ներգրավել **իրավաբան մասնագետների, սոցիալական աշխատողների և ոստիկաններին**՝ որպես բռնության ենթարկված կանանց հետ աշխատող հատուկ խմբերի: Նրանց կարելի է ընդգրկվել ՔՀԿ-ների վերապատրաստման/կարողությունների զարգացման ծրագրերում, օրինակ՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ HELP դասընթացներ կազմակերպելու միջոցով (տե՛ս ստորև առաջարկվող գործիքակազմը):

Հնարավոր դաշնակիցները

Վերոհիշյալ խմբերը թիրախավորելիս կարևոր է դիտարկել հնարավոր դաշնակիցներին, որոնք կարող են լուսաբանել Ստամբուլի կոնվենցիան անհատների լայն խմբերին, և որոնց այլապես դժվար կլիներ ներառել այդ գործընթացում քաղաքական որոշումներ կայացնողների կամ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների միջոցով: Առաջարկվող հնարավոր դաշնակիցներն են.

- **Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ները,** որոնք ուղղակիորեն աշխատում են կանանց նկատմամբ բռնության ոլորտում: Առավելագույն ազդեցություն ապահովելու նպատակով ՔՀԿ-ները պետք է աշխատեն միասին՝ նույն ռազմավարական մոտեցմամբ:
- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ոլորտում **իրավաբանները կամ այլ մասնագետները,** մասնավորապես՝ ոստիկանությունը, սոցիալական աշխատողները, բուժաշխատողները և այլն, որոնք արդեն անցել են վերապատրաստում և գործնականում կիրառում են Ստամբուլի կոնվենցիայի դրույթները:
- **Անսպասելի դաշնակիցները,** այդ թվում՝
    - **Կրոնական առաջնորդները.** Լավ օրինակ է 2017 թվականին Կիպրոսի հինգ հիմնական կրոնական համայնքների կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների և կրոնական առաջնորդների միջև հաստատված համագործակցությունը, որը հանգեցրեց կրոնական առաջնորդների՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը և ընտանեկան բռնությունը դատապարտող հայտարարության:[8]

[7] WAVE-ն նաև աջակցեց այս արշավին սոցիալական ցանցերում, ռե՛ս
https://www.facebook.com/womenagainstviolenceeurope/posts/3266781466723872
https://www.facebook.com/womenagainstviolenceeurope/posts/3295829953819023
https://www.facebook.com/womenagainstviolenceeurope/posts/3275391485862870
[8] https://cruxnow.com/global-church/2017/03/cyprus-religious-leaders-unite-violence-women/

- Հանրային **համակրանքը վայելող և ազդեցիկ** տղամարդիք և կանայք՝ որոնք կաջակցեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:
- **Իրազեկման դեսպանները,** ինչպիսիք են երիտասարդները տեղական համայնքներում: Երիտասարդ գործընկերների խումբը, որն ապահովված է կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՔՀԿ-ների կողմից տրամադրվող գործիքակզմով և աջակցությամբ, հզոր դաշնակից է սոցիալական ցանցերում երիտասարդներին ուղղված ուղերձներ տարածելու համար:
- **Տեղական արվեստագետները**, ովքեր կարող են օգնել ինֆոգրաֆիկայի ձևավորմանը և ստեղծագործական հենք հանդիսանալ արշավների հիմնական ուղերձները հանրությանը հասանելի դարձնելու համար:

Հաղորդակցություն և քարոզարշավներ իրականացնող ՔՀԿ-ները լավ հնարավորություն ունեն Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ դրական տեղեկատվության տարածման հարցում կարևոր որոշումներ կայացնողներին և անսպասելի դաշնակիցներին հայտնաբերելու համար:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

ՔՀԿ-ները պետք է առաջին հերթին թիրախավորեն որոշում կայացնողներին, որոնք կարող են աջակցել Ստամբուլի կոնվենցիայի դրույթների տարածմանն իրենց գործընկերների և լայն հասարակության շրջանում: Այդ առումով, նշված խմբերի թիրախավորման արշավներ իրականացնող ՔՀԿ-ների համար առաջարկվում են հաղորդակցության մի շարք միջոցներ, որոնք ներկայացված են ստորև: ՔՀԿ-ները պետք է պարզեն, թե որ եղանակն է ավելի նպատակահարմար և կարող է արդյունավետ լինել քարոզարշավի նպատակներին հասնելու համար:

Որոշում կայացնողների թիրախավորում

- Կանանց իրավունքների պաշտպանության քարոզարշավներ անցկացնոց ՔՀԿ-ների կողմից ստեղծվող **(առցանց) ֆոկուս խմբեր**, որոնց նպատակն է մեծացնել Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ մարդկանց ըմբռնումը և բացահայտել այն ուղիները, որոնցով այն կարող է դրականորեն առաջ մղվել: Համապատասխան ֆոկուս խմբերի մասնակիցները գտնվում են ՔՀԿ-ների դաշնակիցների, ինչպես նաև նրանց շարքերում, ովքեր առաջին հայացքից հետաքրքրված չեն Ստամբուլի կոնվենցիայով, բայց իրականում պատրաստ են աջակցել դրան: Շեշտը դրվելու է Ստամբուլի կոնվենցիան պարզ լեզվով ներկայացնելուն, դրա նպատակների, չորս հիմնասյունների և վավերացումից և պատշաճ կիրառումից հետո ակնկալվող օգուտների վրա: Ստամբուլի կոնվենցիայի լավ ընկալմանը փոխանակումը կարող է նպաստել նաև այլ երկրների փորձի ուսումնասիրությունը: Ֆոկուս խմբերը կարելի է ներգրավել նաև Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ տեղեկատվությունը տարբեր որոշումներ կայացնողների շրջանում տարածման ռազմավարություն մշակելու համար: Ֆոկուս խմբերի անդամները հետագայում հանդիպումներ/կլոր սեղան-քննարկումներ կազմակերպելիս հանդես կգան որպես այդ խմբերի «օրինակելի ներկայացուցիչներ»:
- **(Առցանց) հանդիպումներ/կլոր սեղան-քննարկումներ**, որոնք համախմբում են որոշումներ կայացնողներին՝ ուղղակիորեն անդրադառնալու և քննարկելու ֆոկուս խմբերի հանդիպումների ընթացքում հնչեցված մտահոգությունները: Այս հանդիպումները/կլոր սեղանի քննարկումները կարող են համալրել համայնքի կամ որոշում կայացողների կողմից սպասարկվող ընտրատարածքների հետ արդեն գոյություն ունեցող ազգային/տեղական մակարդակով առանցքային հանդիպումները: Նման հանդիպումները/կլոր սեղան-քննարկումները նպատակ ունեն նաև ներգրավել շահագրգիռ կողմերի դաշնակիցներին և այլ շահագրգիռ կողմերին, որոնք շահագրգռված են ավելին իմանալու այն բանի մասին, թե իրականում ինչ հարցեր է բարձրացնում Ստամբուլի կոնվենցիան և ինչպես այն կարող է ազդել փոփոխության վրա:

- **«Գիտելիքների փաթեթի» կիրարկում**, որը ներառում է ուսուցում և այլ ռեսուրսներ, ինչպիսիք են Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ հարցերի և պատասխանների գրքույկը, WAVE նյութերը, վիճակագրությունը, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ HELP դասընթացները, որոնք ստեղծվել են Եվրոպայի խորհրդի կողմից և այլն: Դրանք ուղղվում են որոշումներ կայացնողներին, իսկ ՔՀԿ-ների որոշմամբ, նաև այն մասնագետներին, ովքեր շփվում են բռնության ենթարկված կանանց հետ, այդ թվում՝ իրավաբաններին, ոստիկանությանը, սոցիալական աշխատողներին, բուժաշխատողներին և այլոնց, ովքեր հնարավորություն ունեն անմիջականորեն կիրառել Կոնվենցիայի մասին իրենց գիտելիքները:

Լայն հասարակության թիրախավորում

Լայն հանրությանը թիրախավորելիս անհրաժեշտ է.

- Պարզ բառերով բացատրել, թե ինչ է Ստամբուլի կոնվենցիան, դրա ազդեցությունը մարդու կյանքի վրա և ինչպես կարող է այն կանխել և պաշտպանել կանանց և նրանց երեխաներին բռնությունից՝ դրական նառատիվի միջոցով, ներկայացնել, թե ինչ են պարունակում դրա հոդվածները, դրանք բաժանելով կոնկրետ և հստակ համապատասխանող տեղեկատվական բաժինների:
- Դիպչել մարդկանց հուզական աշխարհին՝ որպես ուղերձները տարածելու արդյունավետ մարտավարություն: Այդ նպատակով, պատմությունը կարող է ներկայացնել բռնության ենթարկված կանանց իրական պատմությունները և, թե ինչպես են նրանք հաղթահարել այդ մարտահրավերները Ստամբուլի կոնվենցիայի դրույթների կիրառման շնորհիվ: Անշուշտ, անհատական պատմություններն օգնում են մարդկանց անձնական և հուզական մակարդակով առնչվել մեկ այլ անձի փորձառությանը և հնարավորություն են տալիս հասկանալ անանուն վիճակագրության հիմքում ընկած մարդկային ճակատագրերը: Այն երկրներում, որտեղ Ստամբուլի կոնվենցիան վավերացված չէ, ուղերձները նպատակ ունեն ցույց տալու, թե ինչպես Կոնվենցիայի դրույթների կիրառումն ավելի լավ կօգնի նշված օրինակում ներկայացված բռնությունից տուժած կանանց: Օրինակ, նման ռազմավարություն իրականացվեց Լատվիայում, որտեղ հրապարակվեցին կանանց մասնագետ ծառայություններ դիմած տուժողների անձնական պատմությունները, որին հաջորդեց բացատրությունը, թե կիրարկվելու դեպքում ինչպես Ստամբուլի կոնվենցիան կաջակցեր կոնկրետ տուժողի գործին:
- Կանանց և ընտանեկան բռնության վերաբերյալ վիճակագրություն և տվյալներ՝ իրազեկվածությունը բարձրացնելու և հանրության ուշադրությունը այդ խնդրի վրա սևեռելու համար: Վիճակագրության և անձնական պատմությունների համադրությունը սովորաբար ավելի արդյունավետ է կանանց նկատմամբ բռնության իրական հետևանքները հանրությանը ներկայացնելու համար: Զուտ թվերը հաճախ ոչ հուզական ձևով են ընկալվում և, ինչպես փաստական տեղեկատվության դեպքում, ավելի հեշտ են մոռացվում:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՔՀԿ-ների հաղորդակցության և քարոզարշավների արդյունավետ իրականացման մասին որոշում կայացնողներին և լայն հանրության ներգրավմանն աջակցելու համար ՔՀԿ-ներին առաջարկվում է գործիքակազմ: ՔՀԿ-ները պետք է որոշեն, թե որ գործիքներն է առավել նպատակահարմար օգտագործել իրենց երկրում:

Գործիքները հարմարեցված են հիմնական խնդիրները լուծելու համար, առաջարկում են դրական ուղերձներ և հեշտությամբ հասկանալի տեղեկատվություն Ստամբուլի կոնվենցիայի հիմնական հոդվածների վերաբերյալ: Հիմնական ուղերձների հետ միասին այս գործիքները ներկայացնում են մեթոդաբանության առանցքը և պետք է օգտագործվեն ՔՀԿ-ների կողմից իրենց նախընտրած ձևով:

ՔՀԿ-ներին նաև խորհուրդ է տրվում գործիքների նպատակահարմարությունը որոշելիս խորհրդակցել հաղորդակցության փորձագետի հետ, որպեսզի գործիքներն ու գործողությունները հնարավորինս նպատակային և հարմարեցված լինեն համապատասխան ազգային համատեքստին:

Առաջարկվող գործիքները

- **Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ դրական նառատիվներ տարածող առանցքային ուղերձների մի շարք՝** ուղղված Կոնվենցիայի վերաբերյալ չորս հիմնական թյուր պատկերացումների փարատմանը (տես վերևում): Ուղերձները անդրադառնում են այս թյուր պատկերացումներին առանց կեղծ նառատիվների կրկնման, կենտրոնանալով Ստամբուլի կոնվենցիայի օգուտների վրա և ընդգծելով, որ դրա միակ նպատակն է վերացնել կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը: Այդ առանցքային ուղերձները ներկայացնում են Ստամբուլի կոնվենցիայի դրական նառատիվը՝ պարզ լեզվով բացատրելով, թե ինչ է ենթադրում Ստամբուլի կոնվենցիայի հոդվածների ընտրությունը և դրանք բաժանելով կոնկրետ և հստակ համապատասխանող տեղեկությունների.
    - 1-ից 4-րդ հոդվածներ. Ստամբուլի կոնվենցիայի նպատակը և ինչպես ոչ մի տուժող չպետք է խտրականության ենթարկվի.
    - Հոդված 7. Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ ուղղված համապարփակ քաղաքականություն.
    - 12-ից 15-րդ հոդվածներ. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը նպատակ ունի փոխել այն, թե ինչպես են մարդիկ տեսնում և ընկալում կանանց և տղամարդկանց հասարակության մեջ, և ինչպես ենք մենք խրախուսում ոչ բռնի հաղորդակցությունը:

- 18-ից 26-րդ հոդվածներ. Տուժողներին պետք է աջակցություն ցուցաբերվի և՛ ընդհանուր և՛ մասնագիտացված ծառայությունների միջոցով: 33-ից 40-րդ հոդվածներ. Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի քրեականացում:
- 59-60 հոդվածներ. Գենդերային հիմքով ապաստանի հայցում:

- **ՔՀԿ-ների համար նախատեսված ստուգաթերթ՝** Ստամբուլի կոնվենցիայի արժեքները, նպատակներն ու հիմնական դրույթները ամրապնդելու, դրական նառատիվներ ստեղծելու և դրա մասին առասպելներն ու ապատեղեկատվությունը փառատելու նպատակով: Թեև ստուգաթերթը ծառայում է որպես քարոզարշավների պլանավորման համար ճանապարհային քարտեզ, այն հրահանգային բնույթ չի կրում, և ՔՀԿ-ների գործն է որոշելու, թե որ առաջարկվող գործողություններն ու գործիքները նրանք կարող են կիրառվել ելնելով ազգային առաջնահերթություններից և առկա ռեսուրսներից:

- **Տեղեկագիր «Ինչո՞ւ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան: Տարածված առասպելներ և թյուր պատկերացումներ»:** Կոնվենցիայի իրական նպատակն ավելի ընդգծելու համար փաստերը պետք է հարմարեցվեն ազգային համատեքստին, և այս առումով ՔՀԿ-ներին խորհուրդ է տրվում անդրադառնալ Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ իրենց հանդիպած այլ առասպելներին և դրանց լուծման ուղիներին: Տեղեկագիրը կարող է տարածվել Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ չկողմնորոշված կամ սխալ տեղեկացված մարդկանց շրջանում, ինչպես նաև որոշում կայացնողներին և լայն հանրությանը համախմբելու համար՝ ընդգծելով Կոնվենցիայի իրական նպատակներն ու կարևորությունը:

- **Գրքույկ «Ինչո՞ւ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան. Ինչ փոփոխություններ կարող է այն բերել և ինչ միջոցներ են ձեռնարկվել դրան համապատասխանելու համար»:** Այն ընդգծում է Ստամբուլի կոնվենցիայի կարևորությունը՝ ուրվագծելով դրական փոփոխությունները, որոնց կարող է հանգեցնել Կոնվենցիան, ինչպես նաև այն միջոցները, որոնք ընդունվել են երկրների կողմից դրա վավերացումից հետո: Այս գործիքը կարող է օգտագործվել հիմնական ուղերձների հետ մեկտեղ՝ Կոնվենցիայի նպատակների մասին իրազեկվածության բարձրացմանը համընթաց: Այն նաև ներառում է վարժություն ՔՀԿ-ների համար՝ խորհելու, թե Կոնվենցիայի վավերացումից հետո ինչպես պետք է բարելավվի բռնության ենթարկված կանանց աջակցության համակարգը իրենց երկրներում:

- **Ազդագիր «Ստամբուլի կոնվենցիայի պահանջը՝ ծառայությունների հիմքում դնել տուժողների կարիքներն ու իրավունքները: Ի՞նչ է դա նշանակում տուժողների համար»:** Ազդագիրը ներկայացվում են բռնության ենթարկված անձին

օգնություն ցուցաբերելիս զոհակենտրոն և գենդերազգայուն մոտեցման հինգ հիմնական սկզբունքները. տուժողներին աջակցող գործակալությունների համար՝ տուժողի տրավման չանտեսելու կարևորությունը. բռնության տուժողներին համապատասխան մասնագիտական աջակցության ապահովման կարևորությունը. տուժողների նկատմամբ հարգանքով և կարեկցանքով վերաբերվելու անհրաժեշտությունը. անմիջական վտանգի դեպքում պետական մարմինների կողմից օպերատիվ արձագանքը և այլ էական ծառայությունները, որոնք պետք է հասանելի լինեն տուժողներին՝ իրավազորելու նրանց աջակցության գործընթացում կրկնակի վիկտիմիզացիայից խուսափելու համար: Ազդագիրն ուղղված է որոշումներ կայացնողներին՝ ընդգծելու նման արձագանքի անհրաժեշտությունը՝ բռնության ենթարկված կանանց համարժեք պաշտպանություն և աջակցություն ապահովելու համար և ՔՀԿ-ների կողմից կարող է հարմարեցվել իրենց ազգային համատեքստին:

- **Ինֆոգրաֆիկ «Ընտանեկան բռնության ենթարկված անձի՝ աջակցության ծառայություններից օգտվելու ուղին՝ Ստամբուլի կոնվենցիայի աջակցությամբ և ԱՌԱՆՑ Ստամբուլի կոնվենցիայի աջակցության»,** հենվելով միայն ներպետական օրենսդրության վրա, պատմասության միջոցով՝ գործողություններ նախաձեռնելու համար: Այն ուղղված է որոշումներ կայացնողներին և լայն հասարակությանը՝ բարձրացնելու իրազեկությունը, ապահովելու համապատասխան պաշտպանություն և աջակցություն բռնության ենթարկված կանանց համար, և ՔՀԿ-ների կողմից կարող է հարմարեցվել իրենց ազգային համատեքստին:

- «**Գիտելիքների փաթեթ**» լրացուցիչ ռեսուրսներով՝ քարոզարշավի իրականացումը հեշտացնելու համար: Այն ներառում է.
    - **«Կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկվածության բարձրացում» գրքույկ**[9] այն մասին, թե ինչպես Ստամբուլի կոնվենցիային միացած անդամ պետություններում բարձրացնել կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկվածությունը (կոնվենցիայի 13-րդ հոդված):
    - Եվրոպայի խորհրդի կողմից պատրաստված **Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ «Հարց ու պատասխան» գրքույկ**[10], որը կարող է տարածվել որոշումներ կայացնողների և լայն հանրության շրջանում:

[9] http://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1f1

[10] https://rm.coe.int/istanbul-convention-questions-and-answers/16808f0b80

- Եվրոպայի խորհրդի կողմից պատրաստված **Ստամբուլի կոնվենցիայի չորս հիմնասյունները հստակ պատկերող ինֆոգրաֆիկա**[11] **և գրքույկ**[12], որը կարող է տարածվել որոշումներ կայացնողների և լայն հանրության շրջանում: Անհրաժեշտության դեպքում դրանք կարող են թարգմանվել թիրախային երկրների պետական լեզուներով:
- **Զեկույց քաղաքացիական հասարակության հզորացման պլատֆորմի սոցիալական մեդիա քարոզարշավի մասին**[13], որն իրականացվել է Արևմտյան Բալկաններում և Թուրքիայում և պատրաստվել է WAVE-ի կողմից: Այն կարևորում է Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ դրական ուղերձների ձևակերպումը, համակարգումը և թարգմանությունը:
- **WAVE-ի կողմից գրված երկու բաց նամակների նմուշներ՝** որպես մոդել ՔՀԿ-ների համար, ովքեր ցանկանում են գրել բաց նամակներ՝ կոչ անելով կառավարություններին հրատապ քայլեր ձեռնարկել, կամ ներկայացնել միջնորդագիր՝ հորդորելով խորհրդարաններին վավերացնել/կյանքի կոչել Ստամբուլի կոնվենցիան: Առաջին նամակը գրվել է արձագանքելով նամակին, որը պահանջում էր վերանայել Կոնվենցիան՝ «գենդեր» բառը փոխարինելով «կանանց և տղամարդկանց միջև հավասարություն» բառերով և ստորագրվել էր 333 ՀԿ-ների կողմից: Երկրորդը գրվել է COVID-19-ի բռնկումից հետո՝ կոչ անելով կառավարություններին և միջազգային մարմիններին հետամուտ լինել իրենց պարտավորություններին միջազգային օրենսդրության նկատմամբ՝ պաշտպանելով կանանց և աղջիկներին բռնությունից, դրանով իսկ աջակցելով Ստամբուլի կոնվենցիային:
- WAVE-ի կողմից հավաքագրված **քարոզարշավների օրինակներ սոցիալական մեդիայում** (16 օր շարունակ գործողություններ ընդդեմ գենդերային բռնության)**:**

- **Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վիճակագրություն.**
  - UN Women – Facts and figures: Ending violence against women (2020) (ՄԱԿ-կանայք. «Փաստեր և թվեր. կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը»)

[11] https://rm.coe.int/coe-istanbulconvention-infografic-en-r04-v01/1680a06d0d

[12] https://rm.coe.int/coe-istanbulconvention-brochure-en-r03-v01/1680a06d4f

[13] Քաղաքացիական հասարակության հզորացման պլատֆորմը հարթակ է, որը ստեղծվել է որպես ԵՄ/ՄԱԿ-կանայք ծրագրի մաս. «Կանանց նկատմամբ բռնությանը հաղթահարումը Արևմտյան Բալկաններում. նորմերի կիրառում, մտքերի փոփոխություն»: Հարթակը միավորում է ինը կազմակերպություն Արևմտյան Բալկաններից և Թուրքիայից, նպատակ ունենալով ամրապնդել կանանց կազմակերպությունների հարթակներն ու ցանցերի կարողությունները Ստամբուլի կոնվենցիայի իրագործմանն աջակցելու գործում:

- UNFPA – Cost of ending Gender-based violence (2020) (ՄԱԲՀ. «Գենդերային բռնության հաղթահարման ծախսերը»)
- WHO – Levels of domestic violence as COVID-19 pandemic escalates (2020) (ԱՀԿ. «COVID-19 համաճարակի աճին զուգահեռ ընտանեկան բռնության մակարդակները»)
- UN Women – COVID-19 and ending violence against women and girls (2020) (ՄԱԿ–կանայք «COVID-19 և կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը»)
- WAVE Network – WAVE Country report 2021 – Women's specialist support services in Europe and the impact of COVID-19 on their provision (2021) (WAVE ցանց – WAVE երկրի զեկույց 2021թ. «Կանանց մասնագետների աջակցության ծառայությունները Եվրոպայում և COVID-19-ի ազդեցությունը դրանց տրամադրման վրա»)
- World Bank – Gender-based violence (violence against women and girls) (2019) (Համաշխարհային բանկ. «Գենդերային բռնություն (բռնություն կանանց և աղջիկների նկատմամբ))
- UK Government – Cost of domestic abuse (2018) (Մեծ Բրիտանիայի կառավարություն. «Ընտանեկան բռնությանն առնչվող ծախսերը»)
- WHO -Key facts on VAW (2017) (ԱՀԿ. «Կարևոր փաստեր ԿՆԲ-ի վերաբերյալ»)
- FRA – Violence against women: an EU wide survey. Main results report (2014) (Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն. «Կանանց նկատմամբ բռնություն. հետազոտություն ԵՄ ողջ տարածքում: Հիմնական արդյունքների հաշվետվություն:»)

- Եվրոպայի խորհրդի կողմից **պատրաստված HELP դասընթաց[14] կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին** իրավաբանների համար, որը կարող է տարածվել ՔՀԿ-ների կողմից իրենց գործընկերների շրջանում: Այս առցանց դասընթացը ինտերակտիվ կերպով ընդգրկում է հիմնական հասկացությունները, միջազգային և եվրոպական իրավական դաշտը և եվրոպական նախադեպային իրավունքը, որը կարգավորում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելումն ու նրանց պաշտպանությունը՝ մասնավորապես կենտրոնանալով Ստամբուլի կոնվենցիայի վրա:

- **Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ HELP դասընթաց**[15] իրավապահ մարմինների համար՝ պատրաստված Եվրոպայի խորհրդի կողմից, որը կարող է տարածվել ՔՀԿ-ների կողմից իրենց գործընկերների շրջանում: Դասընթացը առաջարկում է մանրամասն, գործնական և համապարփակ ուսուցում՝ կանանց նկատմամբ բռնության դեպքերին իրավապահ մարմինների արձագանքների որակի բարելավման և զոհերի արդարադատության մատչելիության հարցում աջակցելու համար:

[14] HELP online course on violence against women and domestic violence
[15] Council of Europe HELP online course on Violence Against Women for Law Enforcement Professionals

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԸ

Հաղորդակցության և քարոզարշավների համար օգտագործվող հաղորդակցության կապուղիները տարբերվում են՝ կախված նրանից, թե արդյոք դրանք թիրախավորում են հիմնական որոշումներ կայացնողներին կամ լայն հանրությանը, քանի որ յուրաքանչյուր լսարանի համար գոյություն ունեն առավել հարմարեցված հաղորդակցության տարբեր միջոցներ:

Որոշումներ կայացնողներ

- **Քաղաքական ֆորումներ/խմբեր՝** բարձրացնելու Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ իրազեկվածությունը հիմնական քաղաքական որոշում կայացնողների շրջանում, ովքեր չեզոք են կամ չեն կողմնորոշվում Կոնվենցիայի վերաբերյալ իրենց դիրքորոշման մեջ: Դրանք կարող են նաև ծառայել որպես միջոց շահադրդելու քաղաքական գործիչներին, ովքեր հավանություն են տալիս Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանն ու իրականացմանը, համագործակցելու ընդդիմադիր կուսակցությունների հետ և բաց եղանակով քննարկելու Կոնվենցիայի նպատակներն ու դրույթները: Քաղաքական ֆորումները/խմբերը, որոնց պետք է դիմել, քարոզարշավն իրականացնող ՔՀԿ-ների հայեցողության տակ են:
- **Սոցիալական մեդիան** դարձել է ՔՀԿ-ների, ինչպես նաև որոշումներ կայացնողների հաղորդակցության հիմնական ուղիներից մեկը՝ ընդհանուր բնակչությանը, ինչպես նաև հիմնական քաղաքականություն մշակողներին ընդգրկելու համար: Այս միջավայրն ունի մի քանի առավելություն. այն անվճար է, հեշտությամբ հասանելի և որոշում կայացնողներին ավելի արդյունավետ և արագ է հասնում, քան հիմնական լրատվամիջոցները: Facebook-ը չափազանց արդյունավետ ֆորում է Ստամբուլի կոնվենցիայի կարևորագույն հոդվածները լուսաբանող առցանց քարոզարշավներ նախաձեռնելու համար: Instagram-ը և Twitter-ը նույնպես կարող են հարմարեցվել առցանց քարոզարշավներին, մասնավորապես՝ խրախուսելով որոշում կայացնողներին «ռեթվիթ» անել կամ տեղադրել տարբեր ուղերձներ Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ: YouTube-ը կարող է օգտագործվել՝ ներկայացնելու հնարավոր դաշնակիցների և/կամ որոշում կայացնողների տեսանյութերը, որոնք հանդես են գալիս հօգուտ Կոնվենցիայի վավերացմանը/ավելի լավ իրականացմանը, ընդ որում այդ նյութերը հետագայում կարող են տարածվել Facebook-ի միջոցով կամ այլ հարթակներում: Սոցիալական մեդիան նաև կարևոր է ստորագրահավաք սկսելու համար, դիմելով կառավարությունների պաշտոնյաներին՝ իրենց աջակցությունը ցուցաբերել Ստամբուլի կոնվենցիային և այդ հարցը ներառել խորհրդարանների օրակարգում:
- **Հիմնական մեդիա միջոցները**, ներառյալ տպագիր մամուլը, օրինակ՝ թերթերը, հեռուստաալիքները (լրատվական հեռարձակման ծառայությունները) և անկախ լրատվամիջոցները: Ստամբուլի կոնվենցիայի կարևորությունը ընդգծող խմբագրականների հեղինակների կամ այդ մասին հոդված նախապատրաստող

լրագրողների հետ կապ հաստատելը հաղորդակցության ավելի դյուրին միջոց է, թեև կարևոր է նշել, որ այս ալիքից, հավանաբար, կկարողանա օգտվել ընդդիմության միայն մի փոքր մասը: Ռադիոալիքները, որոնք լայն լսարան ունեն, ևս մեկ կարևոր հաղորդակցության կապուղի են:

Լայն հասարակություն

- **Հանրային գովազդը** հաղորդակցության ամենակարևոր ուղիներից մեկն է, քանի որ այն թույլ է տալիս առանցքային հաղորդագրությունների արագ և արդյունավետ տարածում հանրության լայն զանգվածի համար: Դրանց թվում են ազդագրերը քաղաքային տրանսպորտի կանգառներում, մեծ գովազդային վահանակները, բրոշյուրները և թռուցիկները հասարակական վայրերում, ինչպես նաև բաց տարածքներում պաստառները: Ստամբուլի կոնվենցիայի և դրա նպատակների մասին տեղեկատվությամբ բրոշյուրների տպագրությունը հանրային վայրերում ցուցադրվող իրազեկվածության բարձրացման ծախսարդյունավետ միջոց է:
- **Սոցիալական մեդիան**, ինչպես նշվեց վերևում, ոչ միայն դարձել է ՔՀԿ-ների հաղորդակցության կարևոր ուղի՝ որոշում կայացնողներին հասնելու համար, այլ նաև լայն հանրությանը ներգրավելու առանցքային կապուղի: WAVE-ը Facebook-ում անց է կացրել 16-օրյա քարոզարշավ՝ ներկայացնելով Ստամբուլի կոնվենցիայի առանցքային կարևորության հոդվածները և թե ինչպես են դրանք պաշտպանում կանանց բռնությունից:[16] Instagram-ը և Twitter-ը նույնպես հարմարեցված են լայն հանրությանը ուղղված առցանց քարոզարշավներին՝ շահադրդելով առանձին օգտատերերին կիսվել VAW-ի վերաբերյալ տեղեկություններով և պատմություններով՝ հիմնական ուղերձների շուրջ ծավալվող ընդհանուր հեշթեգով: YouTube-ն, իր հերթին, կարող է օգտագործվել որպես հաղորդակցության կապուղի՝ լայն հանրության ուշադրությունը ներգրավելով մարդկանց կողմից Ստամբուլի կոնվենցիայի ընկալումների վերաբերյալ փողոցային տեսանյութերին:
- **Փոդքասթները** կարող են օգտագործվել Ստամբուլի կոնվենցիայի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար ավելի խորը ձևով, ավանդական հիմնական լրատվամիջոցների համեմատ ապահովելով ավելի մեծ ճկունություն: Հաղորդակցության այս կապուղին հանրաճանաչություն է ձեռք բերել COVID-19 համաճարակի ժամանակ, քանի որ այն կարող է ստեղծվել հեռակա կարգով և վերբեռնվել առցանց կամ շարժական փոդքասթի հավելվածներում, որոնք հասանելի են բնակչության մեծ հատվածներին: WAVE-ը կարող է աջակցել ՔՀԿ-ներին փոդքասթեր ստեղծելու հարցում, քանի որ ստեղծել է իր սեփական

[16] Նման օրինակներ կարելի է գտնել այստեղ. https://www.facebook.com/womenagainstviolenceeurope/photos/pcb.3645699842165364/3645698775498804

փոդքաստը[17]՝ քննարկելու կանանց նկատմամբ բռնության և WAVE հիմնական նախագծերի վերաբերյալ ընթացիկ խնդիրները: ՔՀԿ-ներին խորհուրդ է տրվում նախ օգտագործել հանրաճանաչ և արդեն իսկ հաստատված տեղական փոդքասթները՝ որպես հաղորդակցության ուղիներ, որոնք կօգնեն առաջ մղել Ստամբուլի կոնվենցիայի նպատակները, և այնուհետև որոշել, թե արդյոք նրանք ունեն կարողություններ ստեղծելու իրենց սեփական փոդքաստը:

- **Հիմնական մեդիա միջոցները** կարող են նաև հաղորդակցության արդյունավետ կապուղի հանդիսանալ այն անհատների համար, ովքեր չունեն սմարթֆոն կամ մուտքի հնարավորություն դեպի ինտերնետ: Թեև որոշ թերթեր և հեռուստաալիքներ մասնավոր կամ պետական սեփականություն են, ինչը դժվարացնում է դրանց հասանելիությունը անկախ լրատվամիջոցների համար, դրանք այդուհանդերձ կարող են օգտագործվել լայն հանրությանը և հատկապես լրագրողներին ներգրավելու համար, ովքեր արդեն իսկ իրենց աջակցությունն են ցուցաբերել Ստամբուլի կոնվենցիային:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՔՀԿ-ների համար նախատեսված ստուգաթերթ
2. Տեղեկագիր «Ինչո՞ւ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան: Տարածված առասպելներ և թյուր պատկերացումներ»
3. Գրքույկ «Ինչո՞ւ է մեզ պետք Ստամբուլի կոնվենցիան. Ինչ փոփոխություններ կարող է այն բերել և ինչ միջոցներ են ձեռնարկվել դրան համապատասխանելու համար»:
4. Ազդագիր «Ստամբուլի կոնվենցիայի պահանջը՝ ծառայությունների հիմքում դնել տուժողների կարիքներն ու իրավունքները: Ի՞նչ է դա նշանակում տուժողների համար»
5. Ինֆոգրաֆիկ «Ընտանեկան բռնության ենթարկած անձի՝ աջակցության ծառայություններից օգտվելու ուղին՝ Ստամբուլի կոնվենցիայի աջակցությամբ և ԱՌԱՆՑ Ստամբուլի կոնվենցիայի աջակցության»
6. Գիտելիքների փաթեթ

[17] Այլևս ոչ մի բռնություն կանանց նկատմամբ (WAVE ցանցի փոդքաստ). https://open.spotify.com/show/6p4PBAYF09M06TIP8oWVk9